

լուայի ջուրը տաքցուցած են. դ) Վերնատունէն զատ, Տէրունական քարոզի եկեղեցին. ե) Ս. Ստեփանոսի, Նիկողիմոսի եւ Գամաղիէլի գերեզմանները (R. Bl-1924, էջ 307):

1322 ին, Sir John Maundeville կը յիշէ զանազան աւանդութիւններ Սիոնի եկեղեցիին մէջ (E. P. T. էջ 174): Ուրիշ ուխտաւոր մըն ալ՝ Փելլըքս Ֆապրի կը գրէ թէ Ս. Յովհաննէս Աւետարանչին տան տեղը Սիոնի մօտ էր, եւ թէ անոր վրայ շէնք չկար, այլ միայն բոլորաշէն չոր քարէ պատ մը եւ մէջտեղն ալ մեծ քար մը, որ ունէր երկաթէ գործիքով ծակոտուած տեղ մը՝ ուր կ'ըսեն թէ Ս. Յովհաննէս կը պահէր Հաղորդութեան բաժակը (P. T. S. Բ. մաս, էջ 327(*)):

(*) Այս աւանդութիւնը կը պարզուի հետեւեալ երեք յիշատակաւորութեանով. ա) Թէբեցի Հիպպոլիտի **Ժամանակագրութիւնը** (Ե. դար). բ) Յակոբոս Զերեղիայի յուսարէն ձեռագիր **Վկայաբանութիւնը** (Ը. դար). գ) **Սպիտակ վանականի փարոզները** (Ը. դար): Հիպպոլիտի նախնական այս աւանդութիւնը կը զարգանայ Յակոբոսի ձեռագիր Վկայաբանութեան մէջ եւ իր կատարելութեան կը հասնի Եպեփանի մօտ: Հիպպոլիտի մօտ միակ տիրուածն է Յովհաննէս աւետարանիչը. ան իր հօր մահէն վերջ, կը ծախէ իր ժառանգութեան բաժինը եւ Երուսաղէմի մէջ, ի Սիոն, կը գնէ տուն մը ուր կ'ընդունի Յիսուսի մայր մինչեւ իր մահը: Սիոնի մէջ տուն ունենալուն համար ծանօթ էր ֆահանայապետին (**Յովհ. ԺԸ. 15, 16**): Յետոյ կուգայ ձեռագրին պատմութիւնը՝ ներշնչուած Հիպպոլիտէն կը պատմէ, նոր դեր կատարող մը կ'երեւնայ, Յովհաննէսի եղբայր Յակոբոս առաքելը, երկու եղբայրներ՝ Զերեղիայի մահէն յետոյ կը ծախեն իրենց Գալիլիայ սացումները եւ տուն կը գնեն Սիոնի մէջ: Նոյն տարին Կայիփան ֆահանայապետ էր, եւ որովհետեւ օտարական էր (Քիւրանիոյ Քիստէն), Յակոբոս եւ Յովհաննէս իրենց տուն կտրանոր տուն իբր բնակարան, եւ միւս կտսին մէջ պատրաստեցին Չասիկը: Այդ պատճառով էր որ ֆահանայապետը կը հանչնար Յովհաննէսը: Եպիփան աւելի կ'ընդարձակէ այս պատմութիւնը: Երկու ան-